ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական կրթական երկրորդ համաժողովի մասնակիցներին:

«Այսօր կրկին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ենք՝ հաղորդ դառնալու և ապրելու այն հոգեղեն զգացումները, որ ապրում է Մայր Աթոռը: Համաժողովի մասնակիցները եկել են Մայր Աթոռ՝ ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, ապրելու Սուրբ Էջմիածնի խորհուրդը և իրենց հետ իրենց համայնքները տանելու Մաշտոցի ձեռքով օրհնված մայրենի լեզվի, հայագիտության խորհուրդը...»,- ասաց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը՝ հրավիրելով ՀՀ Կրթության և գիտության փոխնախարար Բագրատ Եսայանին՝ ներկայացնելու համաժողովի աշխատանքները:

Տիար Եսայանը հանգամանորեն անդրադարձավ համաժողովի աշխատանքներին, առաջադրված նպատակներին՝ մեծապես կարևորելով սփյուռքահայ ուսուցիչների դերը հայապահպանության գործում: Փոխնախարարը մասնակիցների անունից նաև շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդյան 55-ամյա տարեդարձի կապակցությամբ և փոխանցեց ամենքի ջերմ բարեմաղթանքները:

Ապա օրհնության խոսքով ներկա ուսուցիչներին դիմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ փոխանցելով ամենքին իր գնահատանքը՝ ազգին, Հայրենիքին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն մատուցած իրենց կարևոր ծառայության համար: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Հայաստանի և Սփյուռքի ուսուցիչները, մեկտեղվելով Հայաստանի երկնքի ներքո, քննարկում են Սփյուռքում կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները և լուծումներ փնտրում դրանց հաղթահարման, հայեցի դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման համար:

Վեհափառ Հայրապետը կարևոր նկատեց նաև Եկեղեցու դերը հայեցի դաստիարակության և հայապահպանության ոլորտում՝ անդրադառնալով վերջին տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության միջև առկա սերտ համագործակցությանը, հատկապես Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման ծրագրին: «*Կարևոր ենք նկատում, որ մեր դպրոցները միշտ մեր Եկեղեցու օրհնության ներքո են գործում, աշակերտները սերտ մասնակցություն ունեն եկեղեցական կյանքին, ներկա են եկեղեցում: Այս կապը պետք է ամրապնդել, զորացնել, որովհետև այս երկուսի համադրմամբ պիտի կարողանանք արժանավոր, հավատավոր ու բարի զավակներ կրթել մեր ժողովրդի համար: ...Բարի զավակ կրթել՝ նշանակում է ապահովել հավերժությունը, հարատև ընթացքը մեր ժողովրդի և բարօրությունը Հայրենիքի*»,- ասաց Նորին Սրբությունը՝ բարի արգասավորում մաղթելով համաժողովի կատարած աշխատանքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔՈՎ ԴԻՄՈՒՄ Է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ